## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"23" դեկտեմբեր 2019 թվականի N 306

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Սույն թվականի դեկտեմբերի 26-ին գումարել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.
   1) Արամուս համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 92-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   2) Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին.
   3) Արամուս համայնքում հաշվառված 1-ին կարգի հաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին 2020 թվականի ընթացքում ամենամսյա դրամական օգնություն տալու մասին.
   4) «Հայաստանի Համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը 2020 թվականին անդամակցելու մասին.
   5) Արամուս համայնքի սոցիալապես անապահով խավին աջակցություն ցուցաբերելու մասին.
   6) Արամուս համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին.
   7) Արամուսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
   8) Արամուսի Մարզամշակույթային Կենտրոնի աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
   9) Արամուս համայնքի և «Ջրային տնտեսության ԾԻԳ» պետական հիմնարկի միջև համաֆինանսավորման պայմանագիր կնքելու մասին.
   10) Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի N 4 որոշման մեջ ավելացում կատարելու մասին.
   11) Հողամասերի նպատակային նանակության փոփոխության մասին.
   12) Արամուս համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբեր 2019 թվականի N 307

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺՈՐԺԻԿ, ԱՆԱՀԻՏ, ՄԱՆՎԵԼ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Ժորժիկ, Անահիտ, Մանվել և Սամվել Նահապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը և բնակելի տունը բաժանել մասերի /համաձայն հատակագծերի/, առանձնացված հատված 1 և առանձնացված հատված 2

1) Առանձնացված հատված 1-ի հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 15/1:

2) Առանձնացված հատված 2-ի հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 15:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"25" դեկտեմբեր 2019 թվականի N 308

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Երիտասարդական 9-րդ փողոց 14 հասցեում գտնվող, քաղաքացիներ Ալինա Նիկողոսի Նիկողոսյանին և Վահրամ Ջիվանի Գաբրիելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0045-0007 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 2513447) իրենց կողմից ինքնակամ կառուցված 156քմ արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացիներ Ալինա Նիկողոսի Նիկողոսյանին և Վահրամ Ջիվանի Գաբրիելյանին ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 156քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 202800 (երկու հարյուր երկու հազար ութ հարյուր) դրամ:

3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *03502169*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"25" դեկտեմբեր 2019 թվականի N 309

## *ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԺԵԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 17-րդ և 18-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Անժելա Ռաֆիկի Խաչատրյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/2/7 հասցեում գտնվող, Անժելա Ռաֆիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0136-0050 կադաստրային ծածկագրով 0,01534հա բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում (վկայական N 24072014-07-0021) իր կողմից ինքնակամ կառուցված 124.6քմ արտաքին մակերեսով հասրակական սպասարկման օբյեկտը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Անժելա Ռաֆիկի Խաչատրյանին ինքնակամ կառուցված 124.6քմ մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտի օրնականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" N 912-Ն որոշման 18-րդ կետի «բ» ենթակետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ հասարակական շինությունների մեկ քառակուսի մետրի համար 2600(երկու հազար վեց հարյուր) դրամ: Շինության ընդհանուր արտաքին մակերեսը 124.6քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 323960 (երեք հարյուր քսաներեք հազար ինը հարյուր վաթսուն) դրամ:

3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"25" դեկտեմբեր 2019 թվականի N 310

## *ՎԱՀԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Վահան Իշխանի Նիկողոսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Արամուս համայնքի Ազատամարտիկների խճուղի 43/4 հասցեում գտնվող 07-013-0128-0062 կադաստրային ծածկագրով հողամասում պարսպապատման նախագծային փաստաթղթեր մշակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"26" դեկտեմբեր 2019 թվականի N 311

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 50000 /հիսուն հազար/ դրամ տալ Անդրանիկ Լնուշի Համբարձումյանին՝ ֆինանսական օգնություն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"26" դեկտեմբեր 2019 թվականի N 312

## *ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԵԼՍԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԲԱՐՈՒՅՐ ՋԱՄԲԱԶՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով. *որոշում եմ*

1. Մելսիկ Հայրապետյանին և Բարույր Ջամբազյանին 2017 թվականի հունիսի 29-ին տրամադրված N 6 շինարարության թույլտվությունը երկարացնել 2 տարի ժամկետով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"26" դեկտեմբեր 2019 թվականի N 313

## *«ԳԵՏԱՓ» ՍՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել «ԳԵՏԱՓ» ՍՊԸ-ին Արամուս համայնքի Անկախության 2-րդ փողոց 12 հասցեում գտնվող 07-013-0103-0002 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կատարել ռեստորանային համալիրի վերակառուցման շինարարական աշխատանքներ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՎՀՀ *03502169*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

“27” դեկտեմբեր 2019 թվականի N 314

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՄԻՇԱ, ԼՈՒՍԻԿ, ԱՐՄԵՆ, ԱՂԱՍԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄՅԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացիներ Միշա, Լուսիկ, Արմեն և Աղասի Նահապետյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 37 հասցեում գտնվող 0,1917 հա հողամասը բաժանել մասերի /համաձայն հատակագծերի/, բաժանվող մաս S=0,07598 հա, S=0.11572 հա:

1) 0,07598 հա մակերեսով հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 37/1 հասցեն:

2) 0,11572 հա մակերեսով հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 37 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

**"27" դեկտեմբեր 2019 թվականի N 315**

## *ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով ՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Երիտասարդական 8-րդ փողոց 9 հասցեում գտնվող, քաղաքացի Ռոման Նիկողոսի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0045-0015 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 2715656) իր կողմից ինքնակամ կառուցված 124,23քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 1,1քմ արտաքին մակերեսով զուգարանը համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացի Ռոման Նիկողոսի Նիկողոսյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ զուգարանի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 124,23քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 161499 (մեկ հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր իննսունինը) դրամ, իսկ զուգարանի արտաքին մակերեսը կազմում է 1,1քմ, որի օրինականացման արժեքը կազմում է 858(ութ հարյուր հիսունութ) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*03502169*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"27" դեկտեմբեր 2019 թվականի N 316

## *ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ, ՀՀ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍԱՆ ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի մարզամշակութային կենտրոնի տնօրեն Կարապետ Վարդանյանի դիմումը, ինչպես նաև Կատարողական Արվեստի Համաշխարհային Ասոցիացիա՝ Վիեննայում 2020 թվականի մարտի 23-26 կայանալիք «Մոցարտ-2020» պատանի երաժիշտների միջազգային մրցույթին մասնակցելու հրավերը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի բյուջեով նախատեսված 10-7-1 ծրագրի 4729 հոդվածից՝ համայնքում հաշվառված, Արամուս համայնքի մարզամշակութային կենտրոնի սան Արմեն Ստեփանյանին՝ Կատարողական Արվեստի Համաշխարհային Ասոցիացիա «Մոցարտ-2020» պատանի երաժիշտների միջազգային մրցույթին մասնակցելու ճանապարհածախսի համար տալ դրամական օգնություն՝ 130000/մեկ հարյուր երեսուն հազար/ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"27" դեկտեմբեր 2019 թվականի N 317

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱՅԱՆԵ ԵՍԱՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Գայանե Վահեի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող, 07-013-0043-0026 կադաստրային ծածկագրի 0.35 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հասցե համարել Կոտայքի մարզի Արամուս համայնքի Երիտասարդական 6-րդ փողոց 34/1 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"30" դեկտեմբեր 2019 թվականի N 318

## *ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՉԱԳԱՆ, ՎՐԵԺ, ՍԻՐՈՒՆ, ԱՂՎԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԳԱՊԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 5 հասցեում գտնվող, քաղաքացիներ Վաչագան, Վրեժ, Սիրուն, Աղվան Առաքելյաններին և Ագապի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0031-0007 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 0296428) իրենց կողմից ինքնակամ կառուցված 119,02քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 29,02քմ ծածկարանը, 7,92քմ արտաքին մակերեսով մառանը, 83,05քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և 8,85քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացիներ Վաչագան, Վրեժ, Սիրուն, Աղվան Առաքելյաններին և Ագապի Պողոսյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ ծածկարանի, մառանի, ավտոտնակի և պարսպի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 119,02քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 154726 (մեկ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր քսանվեց) դրամ, իսկ ծածկարանի, մառանի, ավտոտնակի և պարսպի արտաքին մակերեսը կազմում է 128,84քմ, որոնց օրինականացման արժեքը կազմում է 100496(մեկ հարյուր հազար չորս հարյուր իննսունվեց) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"30" դեկտեմբեր 2019 թվականի N 319

## *ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՐՋԱՆԻԿ, ՎԱՐԴԻԳՅՈՒԼ, ԼԵՎՈՆ, ՀՈՎԻԿ, ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 45 հասցեում գտնվող, քաղաքացիներ Երջանիկ, Վարդիգյուլ, Լևոն, Հովիկ, Անդրանիկ Գաբրիելյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0032-0018 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 437223) իրենց կողմից ինքնակամ կառուցված 164,23քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 80,01քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 7,06քմ արտաքին մակերեսով հավաբունը, 17,85քմ արտաքին մակերեսով գետնատունը և 17,7քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացիներ Երջանիկ, Վարդիգյուլ, Լևոն, Հովիկ, Անդրանիկ Գաբրիելյաններին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ տնտեսական շինության, հավաբնի, գետնատան և պարսպի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 164,23քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 213499 (երկու հարյուր տասներեք հազար չորս հարյուր իննսունինն) դրամ, իսկ տնտեսական շինության, հավաբնի, գետնատան և պարսպի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 122,62քմ, որոնց օրինականացման արժեքը կազմում է 95644(իննսունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*03502169*